«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ահնիձորի Հրանտ Մաթեվոսյանի անվան հիմնական դպրոց» ՊՈԱԿ -ի կառավարման խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ հաստատության տնօրենի պաշտոնը զբաղեցնելու համար:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1. ՀՀ քաղաքացիությունը,
2. «Հանրակրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 17-րդ մասով սահմանված հիմքերի բացակայությունը: Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝
1. դիմում՝ հաստատության կառավարման խորհրդի նախագահի անունով,
2. ՀՀ քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը (բնօրինակի հետ),
3. հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) պատճենը (բնօրինակի հետ),
4. տվյալ հաստատության զարգացման ծրագիրը (որը հավակնորդը կարող է ներկայացվել մինչև գործերի ընդունման ժամկետի ավարտը) (այդ թվում՝ էլեկտրոնային տարբերակով), որը խորհրդի որոշմամբ լիազորված խորհրդի անդամը հավակնորդի կողմից տրամադրելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է հրապարակման տվյալ դպրոցի պաշտոնական կայքում, ինչպես նաև տրամադրում է խորհրդի մյուս անդամներին,
5. ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են մինչև 2021թ. մարտի 29-ից միմչև ապրիլի 16-ը ներառյալ, ամեն օր՝ժամը 10.00 ից 15.00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2021թ ապրիլի 30-ին՝ ժամը 15.00-ին, «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ահնիձորի Հրանտ Մաթեվոսյանի անվան հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի շենքում:

Տեղեկությունների համար զանգահարել 077 68-54-02 հեռախոսահամարով:
Հասցե՝ 1724, Լոռու մարզ, համայնք Թումանյան, գ. Ահնիձոր, 1-ին փող. շենք 27
Հեռ..՝ 077 68-54-02